

տպոցն նմանութեանն՝ հանգոյն զուգակցութեանն. որ ի սկզբանէ աշխարհի կրէ¹ զամենայն բանիւ զաւրութեան, եւ իւրով բնական իշխանութեամբն վարէ ուղղէ եւ առաջնորդէ ամենայն արարածոց. որ ի սկզբանէն արար եւ հաստատեաց զհիմունս երկրի, եւ ձգեաց զերկինս որպէս զխորան. որոյ ձեռքն արարին եւ հաստատեցին զամենայն երեսս երկնից. որ արար զմարդն իսկ ի հողոյ, եւ կարգեաց զբանաւորս զխաւսունս իմաստունս անձնակամս: 8 եւ իբրեւ անձնիշխան կամաւք ապականեցան մարդիկ, ոչ ծանեան զկրարիչն եւ ոչ զպատուիրանս նորա, Որդի ի բնէ ի սկզբանէ նստեր ընդ աջմէ Զաւր, եւ աթոռակից ծնողին իւրոյ էր. իսկ իբրեւ ետես եթէ արհամարհեալ կայր հայր ի մարդկանէ, խաղաց եկն էջ յաջմէ աթոռոյ անտի. ամփոփեցաւ փոքրկացաւ, եւ ի Կուսէն մարմնացաւ մարդացաւ, եւ զանձն ունայնացոյց. եւ մարդ եղեալ, կամաւք կրեալ զվիշտսն, մեռաւ եւ յարեաւ եւ կեցոյց զամենեսեան առ հասարակ. եւ վերացաւ եւ նստաւ յաթոռ իւրոյ բնութեանն, ընդ աջմէ Զաւր՝ իւրոյ ծնողին:

9 Արդ եթէ զայս այսպէս հաւատացես՝ եթէ Քրիստոս որդի եւ ծնունդ է Աստուծոյ, գրովք² եւ բազմաւք եւ անթիւ վկայութեամբ կարեմք հաճել զքեզ, եւ լուանալ զքեզ ի սուտ եւ ի պիղծ մկրտութենէ հերետիկոսութեանն հաւատոց: 10 եւ ընկալ դու զմկրտութիւն սրբութեանն հաւատոցն ի շնորհս յանուն Զաւրն արարչին, եւ ի խոստովանութիւն ծննդեան Որդւոյն ի Զաւրէ, որ է յառաջ քան զյաւիտեանս եւ զժամանակս, որ է ըստ բնութեանն զոյացութեան իւրոյ. եւ ի մարմնանան էջ³ ի Կոյսն սուրբ, որ եղել ի վաղջան ժամանակաց, որ եղել վասն մերոյ փրկութեան եւ կենդանութեան. ի մահն եւ թաղումն նորուն Որդւոյն Յիսուսի Քրիստոսի, եւ ի խաղաղութիւն եւ ի միաբանութիւն եւ ի պարգեւս նորուն Զոգւոյն Սրբոյ: 11 Մկրտեաց դու ի սոյն յայս խորհուրդս սբանչելի կենաց թողութեան եւ նորոգութեան. եւ զմանուկն քո այսմ սրբութեանն երանութեան լուսոյ թողութեան մկրտութեանն արժանի արասցուք. եւ ինդրեսցուք ի Քրիստոսէ Տեառնէ մերմէ, զի թողցէ զմեզս անհաւատութեան հերձուածողութեանն եւ ողորմի. վասն որոյ ցաւք եւ տանջանք եղեն ի սկզբանէ եւ լինին: 12 Այդմ ես լինիմ երաշխաւոր վասն Տեառն ողորմածի՝ զի զմանուկն ողջ անարատ առաջի քո կալայց, եթէ դու յուղղափառ հաւատս⁴ եկեսցես, եւ իբրեւ զայլ որթողոքս խոստովանեսցիս ընդ մեզ:

1 Յօր. կրել

2 Յօր. որովք

3 Չիք յօր.

4 Մեք յաւելաւք՝ հաւատս